Հաստատված է՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
26.12.2013թ. թիվ 33/3-Լ որոշմամբ
Խորհրդի նախագահ՝

_____ Արա Զոհրաբյան

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԳՆԱՑՈՒՑԱԿ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ[1])

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն գնացուցակը որոշվել է «Փաստաբանության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն և կարող է օգտագործվել միայն դատարանների կողմից՝ դատական ծախսերի մեջ ներառող փաստաբանի ողջամիտ վարձատրությունը որոշելու նպատակով:

2. Դատական ծախսերի մեջ ներառող փաստաբանի վարձատրությունը (այսուհետ նաև՝ հոնորար) որոշվում է հաշվի առնելով վստահորդի և փաստաբանի կամ փաստաբանական կազմակերպության միջև կնքված պայմանագիրը (պայմանագրի պատճենը)՝ անկախ վճարման փաստից:

3. Վարչական կամ քաղաքացիական գործով դատարանը կարող է փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրում նշված արժեքը հիմք չընդունել, եթե այն էականորեն գերազանցում է սույն գնացուցակում նշված արժեքը: Այս դեպքում, որպես փաստաբանի ողջամիտ վարձատրության չափ կարող է հիմք ընդունվել սույն գնացուցակում նշված սակագինը:

4. Սույն գնացուցակում օգտագործված բազային տուրքը սահմանվում է 1.000 (հազար) ՀՀ դրամ:

---

[1] Գնացուցակը նոր խմբագրությամբ հաստատվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 29.07.2021թ. թիվ 11/25-Լ որոշմամբ

II. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ ՔՆՆՎՈՂ ԳՈՐԾԵՐՈՎ

1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1) Բռնագանձում

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	գումարի բռնագանձումը, ներառյալ՝ տույժերի, տոկոսների բռնագանձումը (մինչև մեկ միլիոն ՀՀ դրամ պահանջի դեպքում)	բռնագանձման ենթակա գումարի 20%-ի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 100-ապատիկի չափից
2.	գումարի բռնագանձումը, ներառյալ՝ տույժերի, տոկոսների բռնագանձումը (մեկ միլիոն ՀՀ դրամից մինչև քսան միլիոն ՀՀ դրամ պահանջի դեպքում)	բռնագանձման ենթակա գումարի 10%-ի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 200-ապատիկի չափից
3.	գումարի բռնագանձումը, ներառյալ՝ տույժերի, տոկոսների բռնագանձումը (քսան միլիոն ՀՀ դրամը գերազանցող պահանջի դեպքում)	բռնագանձման ենթակա գումարի 5%-ի չափով
4.	վնասը և բաց թողնված օգուտը հատուցելը, ներառյալ՝ ա) կյանքին և առողջությանը պատճառված վնասը հատուցելը, բ) ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասը հատուցելը, գ) հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելը, դ) վարչարարությամբ պատճառված վնասը հատուցելը	բռնագանձման ենթակա գումարի 10%-ի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150-ապատիկի չափից
5.	չվճարված աշխատավարձի կամ այլ վճարների բռնագանձում	բռնագանձման ենթակա գումարի 10%-ի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150-ապատիկի չափից

2) Սեփականության իրավունք

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	սեփականության իրավունքի ճանաչում, ներառյալ՝ ձեռքբերման վաղեմության ուժով	բազային տուրքի 400-ապատիկի չափով
2.	սեփականության իրավունքի դադարեցում, ներառյալ՝ գերակա հանրային շահի դեպքում պետության և հասարակության կարիքների համար սեփականության օտարում	բազային տուրքի 500-ապատիկի չափով
3.	ընդհանուր սեփականության բաժանում, ներառյալ՝ ընդհանուր սեփականությունից բաժնի առանձնացում	բազային տուրքի 400-ապատիկի չափով

3) Օգտագործման իրավունք

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	օգտագործման իրավունքի ճանաչում, ներառյալ՝ հարկադիր սերվիտուտ սահմանել	բազային տուրքի 300-ապատիկի չափով
2.	օգտագործման իրավունքի դադարեցում, ներառյալ՝ հատուցմամբ կամ անհատույց բնակելի տարածության օգտագործման իրավունքի դադարեցում և բնակարանից վտարում	բազային տուրքի 300-ապատիկի չափով

4) Տիրապետման իրավունք

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից ետ վերադարձնելը	բազային տուրքի՝ 400-ապատիկի չափով
2.	տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտման վերացումը	բազային տուրքի 300-ապատիկի

5) Գրավի իրավունք

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	Գրավի իրավունքից ծագող վեճեր, այդ թվում՝ գրավի պայմանագիրը լուծված համարել	բազային տուրքի 500-ապատիկի չափով

6) Գործարքի անվավերություն

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	վիճահարույց գործարքներն անվավեր ճանաչելը, ներառյալ՝ ա) էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքները, բ) խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնությամբ կամ ծանր հանգամանքների բերումով կնքված գործարքները, գ) իր իրավունակության սահմաններից դուրս եկած իրավաբանական անձի կնքած գործարքները, դ) սահմանափակ գործունակ քաղաքացու կնքած գործարքի անվավերությունը, ե) այլ հիմքով կնքված գործարքները	բազային տուրքի 500-ապատիկի չափով, ինչպես նաև՝ եթե անվավերության հետևանքների կիրառման ածանցյալ պահանջը՝ ա) գումար բռնագանձելուն է վերաբերվում, ապա նաև բռնագանձվող գումարի 5 տոկոսի չափով, կամ բ) ոչ գույքային պահանջին է վերաբերվում, ապա նաև բազային տուրքի 200-ապատիկի չափով
2.	առոչինչ գործարքի անվավերության հետևանք կիրառել, ներառյալ՝ ա) կեղծ և շինծու գործարքների, բ) անգործունակ անձի կողմից կնքված գործարքի, գ) նոտարական ձևը չպահպանելու վերաբերյալ գործարքների, դ) պետական գրանցման պահանջը չպահպանելու վերաբերյալ գործարքների, ե) այլ հիմքով կնքված գործարքների	բազային տուրքի 500-ապատիկի չափով, ինչպես նաև՝ եթե անվավերության հետևանքների կիրառման ածանցյալ պահանջը՝ ա) գումար բռնագանձելուն է վերաբերվում, ապա նաև բռնագանձվող գումարի 5 տոկոսի չափով, կամ բ) ոչ գույքային պահանջին է վերաբերվում, ապա նաև բազային տուրքի 200-ապատիկի

		չափով
3.	գործարքը վավեր ճանաչելը	բազային տուրքի 400-ապատիկի չափով

7) Պայմանագրի հետ կապված գործողություններ

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	պայմանագիր կնքել պարտավորեցնելը	բազային տուրքի 400-ապատիկի չափով
2.	պայմանագիրը փոփոխելը և լուծելը	բազային տուրքի 400-ապատիկի չափով

8) Ժառանգության իրավունք

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	կտակն անվավեր ճանաչելը	բազային տուրքի 500-ապատիկի չափով
2.	անարժան ժառանգին մեկուսացնելը	բազային տուրքի 400-ապատիկի չափով
3.	ժառանգությունը բաժանելը	բազային տուրքի 400-ապատիկի չափով
4.	գույքն անժառանգ ճանաչելը	բազային տուրքի 300-ապատիկի չափով
5.	ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելը և ժառանգության հետ կապված այլ պահանջ	բազային տուրքի 400-ապատիկի չափով

9) Ամուսնաընտանեկան իրավահարաբերություններ

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	ամուսնությունը լուծելը	բազային տուրքի 200-ապատիկի չափով
2.	ալիմենտ պահանջելը	բազային տուրքի 250-ապատիկի չափով

3.	ալիմենտի չափը փոփոխելը	բազային տուրքի 250-ապատիկի չափով
4.	ծնողական իրավունքից զրկելը կամ սահմանափակելը	բազային տուրքի 500-ապատիկի չափով
5.	ծնողական իրավունքը վերականգնելը	բազային տուրքի 400-ապատիկի չափով
6.	հայրությունը ճանաչելը	բազային տուրքի 300-ապատիկի չափով
7.	երեխայի բնակության վայրը որոշելը	բազային տուրքի 300-ապատիկի չափով
8.	երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելը	բազային տուրքի 300-ապատիկի չափով
9.	ամուսնական պայմանագիրը փոփոխելը և լուծելը	բազային տուրքի 300-ապատիկի չափով
10.	ամուսնաընտանեկան այլ պահանջ	բազային տուրքի 200-ապատիկի չափով

10) Մտավոր սեփականության իրավունք

N	***հայցի առարկան***	***հոնորարի չափ***
1.	մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պաշտպանությունը, ներառյալ՝ ա) գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքը, բ) ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների նկատմամբ իրավունքը, գ) ֆիրմային անվանումը, դ) ապրանքային նշանը, ե) ապրանքի ծագման տեղանունը զ) հեղինակային իրավունք	բազային տուրքի 500-ապատիկի չափով
2.	լիցենզային պայմանագրի լուծումը, փոփոխումը և անվավեր ճանաչելը	բազային տուրքի 400-ապատիկի չափով
3.	մտավոր գործունեության արդյունքներ ստեղծելու և օգտագործելու պայմանագրի լուծումը, փոփոխումը և անվավեր ճանաչելը	բազային տուրքի 400-ապատիկի չափով

4.	հարակից իրավունքների պաշտպանությունը, ներառյալ՝ ա) կատարման իրավունքը, բ) ձայնագրման և տեսագրման իրավունքը, գ) հեռարձակելու իրավունքը	բազային տուրքի 250-ապատիկի չափով

11) Աշխատանքային իրավունք

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի գումարի բռնագանձում	բազային տուրքի 400-ապատիկի չափով
2.	գործադուլն անօրինական ճանաչելը	բազային տուրքի 200-ապատիկի չափով
3.	աշխատանքային վեճով այլ պահանջը	բազային տուրքի 200-ապատիկի չափով

12) Իրավաբանական անձինք

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	կորպորատիվ վեճերը՝ ա. կառավարման մարմինների որոշումն անվավեր ճանաչելը. բ. փաստաթղթեր տրամադրելը և/կամ աուդիտ իրականացնելը պարտավորեցնելը գ. մասնակիցների/բաժնետերերի այլ իրավունքների պաշտպանությունը	 ա. բազային տուրքի 600 ապատիկի չափով բ. բազային տուրքի 400 ապատիկի չափով գ. բազային տուրքի 400 ապատիկի չափով

2.	իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը կամ ֆիզիկական անձին սնանկ ճանաչելը	բազային տուրքի 300-ապատիկի չափով

13) Պարտավորական իրավունք

N	***հայցի առարկան***	***հոնորարի չափ***
1.	պայմանագրային պարտավորություններից ծագած վեճերի քննությունը, ներառյալ՝ պարտավորությունը բնեղենով կատարելը	բազային տուրքի 400-ապատիկի չափով
2.	անհիմն հարստացմամբ ձեռք բերված գույքի վերադարձի պահանջը (անհիմն հարստացմամբ գումարի բռնագանձման պահանջի դեպքում գործում է սույն գնացուցակի Ա կետի կանոնը)	բազային տուրքի 400-ապատիկի չափով
2.	արտապայմանագրային պարտավորություններից բխող պահանջը	բազային տուրքի 400-ապատիկի չափով
3.	միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններից բխող պահանջը, ներառյալ՝ ա) պարգև վճարելու հրապարակային խոստումը, բ) հրապարակային մրցույթը, գ) առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունները	բազային տուրքի 400-ապատիկի չափով
4.	Ապահովագրական վեճերից բխող պահանջը ապահովագրական ընկերության նկատմամբ (գումարի բռնագանձման պահանջի դեպքում գործում է սույն գնացուցակի Ա կետի կանոնը)	բազային տուրքի 400-ապատիկի չափով
5.	Վարկային պարտավորություններից բխող պահանջը բանկի կամ վարկային կազմակերպության նկատմամբ (գումարի բռնագանձման պահանջի դեպքում գործում է սույն գնացուցակի Ա կետի կանոնը)	բազային տուրքի 400-ապատիկի չափով

14) Պատիվ, արժանապատվություն, գործարար համբավ

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	պատվի և արժանապատվության պաշտպանությունը (այդ թվում՝ գումար բռնագանձելու պահանջը)	բազային տուրքի 300-ապատիկի չափով
2.	գործարար համբավի պաշտպանությունը (այդ թվում՝ գումար բռնագանձելու պահանջը)	բազային տուրքի 400-ապատիկի չափով

2. ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1) Ընդհանուր վարույթի գործեր

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1.	Միջամտող վարչական ակտը վերացնելը (անվավեր ճանաչելը) կամ փոփոխելը, բացառությամբ ճանապարհային ոստիկանության կողմից կայացված տուգանքի վարչական ակտերի	վարչական ակտով նախատեսված գումարի (տուգանքի, տույժի և այլն) 5 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 200-ապատիկի չափից և ոչ ավել բազային տուրքի 3000-ապատիկի չափից, իսկ եթե միջամտող վարչական ակտով տուգանք նախատեսված չէ՝ բազային տուրքի 400-ապատիկի չափով
2.	ճանապարհային ոստիկանության վարչական ակտը վերացնելը (անվավեր ճանաչելը) կամ փոփոխելը	վարչական ակտով նախատեսված գումարի (տուգանքի, տույժի և այլն) 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 70-ապատիկի չափից, իսկ ոչ դրամական տույժ կիրառելու դեպքում՝ բազային տուրքի 100-ապատիկի

		չափով
3.	բարենպաստ վարչական ակտ ընդունել պարտավորեցնելը, ներառյալ՝ որոշում կայացնելը	բազային տուրքի 300-ապատիկի չափով
4.	որոշակի գործողություններ կատարելը կամ վարչական ակտի ընդունմանն ուղղված գործողություններից ձեռնպահ մնալը	բազային տուրքի 500-ապատիկի չափով
5.	վարչական ակտն առոչինչ ճանաչելը	բազային տուրքի 500-ապատիկի չափով
6.	այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելը,	բազային տուրքի 400-ապատիկի չափով
7.	իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը ճանաչելը	բազային տուրքի 400-ապատիկի չափով

2) Հատուկ վարույթի գործեր

N	*վարույթի տեսակը*	*հոնորարի չափ*
1.	նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելը	բազային տուրքի 700-ապատիկի չափով
2.	հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելը	բազային տուրքի 300-ապատիկի չափով
3.	ընտրական իրավունքի պաշտպանությունը	բազային տուրքի 400-ապատիկի չափով
4.	դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելը	բազային տուրքի 300-ապատիկի չափով
5.	անձնական տվյալների պաշտպանությունը	բազային տուրքի 200-ապատիկի չափով
6.	հասարակական կազմակերպության ներկայացրած հայցով գործեր	բազային տուրքի 200-ապատիկի չափով
7.	լիցենզիայի հետ կապված լիազոր մարմնի որոշումների իրավաչափությունը վիճարկում	բազային տուրքի 300-ապատիկի չափով
8.	նոտարական գործողությունները վիճարկելը	բազային տուրքի 400-ապատիկի չափով
9.	կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները փաստի հիմքով վիճարկելը	բազային տուրքի 500-ապատիկի չափով
10	անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկումը	բազային տուրքի 200-ապատիկի չափով

3. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

N	*հայցի առարկան*	*հոնորարի չափ*
1	Դատական ակտի կատարումը հետաձգելը կամ տարաժամկետելը,	բազային տուրքի 150-ապատիկի չափով
2	դատական ակտի կատարման եղանակը, կարգը փոփոխելը	բազային տուրքի 150-ապատիկի չափով
3	կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելը	բազային տուրքի 150-ապատիկի չափով
4	վճռի շրջադարձ կատարելը	բազային տուրքի 200-ապատիկի չափով
5	կատարողական թերթը պարզաբանելը	բազային տուրքի 150-ապատիկի չափով

III. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԺԱՄԱՎՃԱՐՈՎ

5. Այն դեպքում, երբ համապատասխան գործը նախատեսված չէ սույն գնացուցակի II բաժնում, ապա դատական ծախսերի մեջ ներառող փաստաբանի խելամիտ (ողջամիտ) վարձատրությունը որոշելու նպատակով, դատարանը կարող է կիրառել ժամավճարի ռեժիմը:

6. Սույն բաժնում նշված կարգով փաստաբանի խելամիտ (ողջամիտ) վարձատրությունը որոշելիս փաստաբանի աշխատանքի (որը ներառում է նյութերն ուսումնասիրելը, օրենսդրությունն ուսումնասիրելը, փաստաթղթերի նախագծեր կազմելը, դատական նիստին կամ այլ դատավարական գործողությանը մասնակցելը) **1 (մեկ) ժամի** դիմաց փաստաբանի վարձատրությունը գնահատվում է **բազային տուրքի երեսնապատիկի** չափով:

IV. ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՎՃՌԱԲԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ ՔՆՆՎՈՂ ԳՈՐԾԵՐՈՎ

7. Քաղաքացիական գործերով վերաքննիչ ատյանում վերոհիշյալ գների նկատմամբ կիրառվում է **0,8 գործակիցը**:

8. Քաղաքացիական գործերով վճռաբեկ ատյանում վերոհիշյալ գների նկատմամբ կիրառվում է **0,9 գործակիցը**:

9. Վարչական գործերով վերաքննիչ ատյանում վերոհիշյալ գների նկատմամբ կիրառվում է **0,8 գործակիցը**:

10. Վարչական գործերով վճռաբեկ ատյանում վերոհիշյալ գների նկատմամբ կիրառվում **է 0,9 գործակիցը**:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Սույն գնացուցակը չի կարող սահմանափակել փաստաբանների կողմից իրենց կամքով պայմանագիր կնքելու և դրա պայմանները որոշելու ազատությունը: Սույն գնացուցակը չի կարգավորում փաստաբանի և իր վստահորդի միջև պայմանագրային հարաբերությունները:

12. Սույն գնացուցակը չի կարող օգտագործվել այլ նպատակներով, ներառյալ հարկային մարմինների կողմից փաստաբանների ծառայությունների գները համեմատելու նպատակով:

13. Կախված գործի բարդությունից և տևողությունից, դատարանները կարող են վերոհիշյալ գների նկատմամբ կիրառել **1,5-ից մինչև 2 գործակից**:

14. Մի քանի փոխկապակցված պահանջների դեպքում կիրառվում է հիմնական պահանջի համար նախատեսված հոնորարի չափը:

15. Հայաստանի Հանրապետության հեռավոր սահմանամերձ բնակավայրերում դատարանները կարող են վերոհիշյալ գների նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը:

16. Սույն գնացուցակը կարող է փոփոխվել կամ լրացվել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ:

17. Նոր խմբագրությամբ հաստատված սույն գնացուցակն ուժի մեջ է մտնում 2021 թվականի օգոստոսի 1-ից և գործում է անժամկետ:

18. Մինչև 2021 թվականի օգոստոսի 1-ը հարուցված քաղաքացիական և վարչական գործերով կիրառվում է նախորդ խմբագրությամբ (մինչև 2021թ. օգոստոսի 1-ը գործող) հաստատված Դատարանների կողմից դատական ծախսերի հատուցման հետ կապված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակը: